# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**2025թ. մարտի 17-19-ը Գերմանիայի Դաշնային Հանրապետություն (ք. Բեռլին) կատարած գործուղման արդյունքների մասին**

1. <u>**ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**</u>
   Դավիթ Խուդաթյան

2. <u>**ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**</u>
   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

3. <u>**ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ և ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**</u>

   Գերմանիայի Դաշնային Հանրապետություն (ք. Բեռլին), մարտի 17-19

4. <u>**ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**</u>
   ԳԴՀ տնտեսական գործերի և կլիմայական գործողությունների դաշնային նախարարություն և արտաքին գործերի դաշնային նախարարություն

5. <u>**ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ)**</u>
   Մասնակցություն «Էներգետիկ փոխակերպման 11-րդ երկխոսություն» համաժողովին:

6. <u>**ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**</u>
   Համաժողովի ընթացքում ներկայացվել են վերականգնվող էներգիայի հետագա ընդլայնման ռազմավարությունները՝ գլոբալ COP28-ի նպատակներին հասնելու նպատակով:
   Հանդիպման ընթացքում քննարկվել են հետևյալ թեմաները՝
   - Վերականգնվող էներգիայի կայուն զարգացում և ներդրումային հնարավորություններ
   - Արդյունաբերության ածխաթափում և կլիմայական քաղաքականություն
   - Կանաչ ֆինանսավորման մեխանիզմներ
   - Միջազգային համագործակցությունը էներգետիկ անցման ոլորտում
   - Ջրածնի տեխնոլոգիաների զարգացում և ենթակառուցվածքներ
   - Վերականգնվող էներգիայի մատակարարման շղթաների կայունություն
   - Էներգաարդյունավետության խթանում
   - Կիբեռանվտանգության ապահովումը էներգետիկ ենթակառուցվածքներում

կրթության ու վերապատրաստման ծրագրերի ընդլայնման անհրաժեշտությունը:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

Երկկողմ հանդիպումներ եմ ունեցել գերմանական Fichtner ընկերության գործադիր տնօրեն Մարտին Շթիքելի, Solar Power Europe ընկերության գլխավոր գործադիր տնօրեն Վալբուրգա Հեմեցբերգերի հետ: Գործընկերների հետ քննարկվել են վերականգնվող էներգիային և կուտակիչ կայանների կառուցմանը վերաբերող հարցեր:

7. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Համաժողովի ընթացքում կարևորվել է տարածաշրջանային և միջազգային մակարդակով համագործակցության խորացումը՝ կանաչ էներգետիկայի զարգացման համատեքստում: Համաձայնություն է ձեռք բերվել շարունակել փորձի և լավագույն գործելակերպերի փոխանակումը՝ ջրածնային տեխնոլոգիաների և էներգաարդյունավետության ոլորտում:

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Համաժողովի մասնակիցները առաջարկել են ընդլայնել միջազգային համագործակցությունը և կառուցողական երկխոսությունը՝ հաջող էներգետիկ անցման հասնելու համար:

10. **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ**

21.03.2025

**Հավելված N 3**
**ՀՀ վարչապետի 2018 թ.**
**սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման**
**Օրինակելի ձև**

**Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**
**ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ**

1. Մարմնի անվանումը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը ՀՀ վարչապետի 10.03.2025թ. 193-Ա որոշում

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը) (*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*) — Դավիթ Խուդաթյան, ՀՀ ՏԿԵ նախարար

4. Գործուղման վայրը — Գերմանիայի Դաշնային Հանրապետություն /Բեռլին/

5. Գործուղման ժամկետները — 17.03-19.03.2025թ.

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ — 2025թ. ՀՀ պետական բյուջե

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)
(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)
□ ***ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը***
□ *բ. գործուղման անհատական իրավական ակտով տրված գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն*

| | | | **Ընդամենը** |
|---|---|---|---|
| Ճանապարհա ծախս | Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս) | էկոնոմ դաս | |
| | Ավիատոմսի արժեքը (դրամ) | **197569** | **197569** |
| Գիշերավարձ /հյուրանոցային փաստաթուղթ 250€/ | Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) | 125 | |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | 53313 | 53313 |
| | Օրերի քանակը | 2 | |
| | Ընդամենը (դրամ) | ***106626*** | ***106626*** |
| Օրապահիկ | Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) | 122 | |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | 52083 | |
| | Օրերի քանակը | 3 | |
| | Ընդամենը (դրամ) | ***156249*** | ***156249*** |
| Այլ ծախսեր | Հակահամաճարակային նմուշառումների վճար | | |
| | Մուտքի արտոնագրի վճար | | |
| | Այլ ծախսեր դիվանագիտական սրահից օգտվելու վճար | | **0** |
| **Ընդամենը ծախսեր** | | ***460444*** | ***460444*** |

21.03.2025
Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը: Ա.Երիցյան